



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

5566

2-3

12

891.99

W-42

218

Unkuyulyuchi Ch.

2002

2011

ՅԼ.542-3

Ա-42

Հ Ա Ր Ի Ր

69

ՈՒԽՏԱԽՈՐԸ

8
29

Հրատարակութիւն Կ. Հ. Ա. Մ.

„Մեծ Քաղաքի“ ձիւղի



Կիսակ 5 րոպի լրացաւ 10

Ժ Ը Ն Ե Ի

1903

89193

U-42

ԵՍՏ

WY

Ո Ւ Խ Տ Ա Ի Ռ Ր Ը

8
29

(Պետազի եւ էր խմբի լիշատակին)

Սկսած մոռացութեան ամօթը ճակատիս, անյազ վրէժի գայլոյթը կրծքիս, սար ու ձոր անցած ու խտի եմ եկել: Եւ մէկիկ-մէկիկ ես կը համբուրեմ սուրբ շիրիմները նահատակների, թողութիւն կուզեմ նրանց սուերից, որ ազատութեան քրազան մարտին ես անմասն եղայ, ես ապրում եմ դեռ...

Եւ լուռ դիչերւայ այս տխուր ժամին, երբ մեռելները մեզմ փսփսում են և պատմում իրար կտնայ վիշտ ու ցաւ, երբ մոռացութեան, ապիպատութեան խորունկ կսկիծը ցաւի երգ շինած՝ ողբ են մրմնջում շիրիմների տակ, — գլուխս լամ ճողի թմբերին՝ ես ակամօջ կանեմ նրանց յայցին, անգիր կուսանեմ նրանց շշուկներ և արտիս վրայ բոցեղէն տառով ես կը զրոշմեմ մա-

5325

հու աշխարհի հնչող ձայները, ես կը հառա-
չեմ նրանց հառաչով, ես կը կսկծամ նրանց ցա-
ւերով, ես լաց կը լինեմ նրանց արցունքով, ա-
պա անզգայ, քարսիրտ աշխարհին ցաւը կը պա-
տմեմ նահատակներին...

Լուռ է ամէն ինչ, գիշերը՝ խաւար, դաշտերը,
մռայլ, լեռները՝ համր, վտակն՝ անձայն, քամի-
ներն՝ զգոյշ: Խաղաղութիւնը նուիրական է -
այստեղ են հան գ չ ու մ ն ա հ ա տ ա կ ն ե ը ը :

Չիբիմ չկայ, թումբեր չկան, քար չկայ, ան-
յիշատակ ու անզարդ, հսկայական դամբարան...

Գաշտ, արիւնոտ վայր, գիտեմ, դու տեսար
այն ահեղ մարտը, ուր մէկը տասի դէմ, նզովք
կարգալով սև ճակատագրին՝ մէկ-մէկ փուլեցին
իմ եղբայրները՝ խեղճ հայրենիքի մօտիկ փը-
կութեան անհուն կարօտը այրած սրտերում,
անկատար իղձերի, վառ երագների ցաւը կը-
ծքերում... Ասան, դաշտ, ո՛ւր, ինչպէս ընկան
նահատակները, ո՛ւր են նրանց որբագան շի-
բիմները...

Լուռ է սև դաշտը, գիշերը՝ խաւար, քամի-
ներն՝ անձայն:

Մեծ լուսթիւն, դուսար անհունի. դու, որ
ոճիրն ու ազնիւ գործը միևնոյն սիրով համր
խաւարի բիւրածալ քօղով ընդմիշտ ծածկելու



93655-Ա2

1462-2002

տխուր գերն ունես. միայնութեան, խուլ ան-
կիւնների, լուռ գիշերների մռայլ սիրահար, որ
անհուն դարուց, ով գիտէ ինչու քո անզգայ ծո-
ցում արիւնոտ դէպքի, անյայտ ցաւերի, ծա-
ծուկ արցունքի կորած հառաչի, անզօր զայ-
րոյթի գաղտնիքն ունես, — դու տեսար մի օր
այս սև դաշտերում, ինչ որ աշխարհում ոչ որ
չտեսաւ: Դու ասա դոնէ, ինչպէս ընկան նահա-
տակները և ո՛ւր են նրանց սուրբ շիբիմները...

Լուռ է ամէն ինչ, խաւարը՝ խեղզող, վտակը՝
համր:

Գարահիսար լեռ, անէծքի՛ անուն. քո կանաչ
մէջքին այն սև գիշերում դու բոսորային ծի-
րանի առար, խոշ ու խոռոչներ և մերկ կողերդ
ալ-կարմիր քօղով մէկէն պատեցիր. թէ որ խոր
ցաւից, անհուն ամօթից բարդ-բարդ ամպերով
չէիր պատել դէմքդ, ասան դու ինձ, լեռ, քո ո՛ր
ժայռի տակ լուռ ընկաւ Պետօն, ո՛րտեղ պառ-
կեցին իր ընկերները... Դու միայն էիր քո սոււե-
րի հետ լուռ յուզարկաւոր նահատակներին. ա-
սան, լացեցիր այնքան մահերը, և քո այրերի
լուռ կամարները արձագանք տւին քո հսկայ
սուղին...

Լուռ է սև լեռը, խաւարը՝ ճնշող, քամիներն
անշշուռնջ:

Մուլար թափառական, խելագար քամի. դու, որ մենաւոր եղեգների հետ ողբ ես յօրինում ուշ գիշերներին և նրանց դալար մէջքերին փարած՝ մեղմ հեծեծում ես մի անյայտ ցաւից. դու, որ կորած, անտէր շիրիմների զաղտնիքն ես երգում մեղմիկ շշուճով. դու, որ արիւնոտ մարտի դաշտերում ընկած քաջերին գովք ես յօրինում և անլազ լիզում վառ ծաղիկների արիւնոտ ցօղը կիզիչ արևի շողերից ծածուկ,— ասա՛, դու, ինչո՞ւ ես այսօր լուռ, զգոյշ, ինչո՞ւ ես անձայն. այն ինչ զաղտնիք է, որ եթերային թևերիդ առած՝ լռիկ փախչում ես աշխարհէ աշխարհ: Գու վախենո՞ւմ ես յուզել հանգիստը այս լուռ վայրերի... Չը լինի թէ գիտես, թէ ո՞ւր են պառկել հայ հայդուկները: Գէհ, ասա՞ դու ինձ, որ ձորում փնտռեմ շիրիմը նրանց...

Լուռ է խենթ քամին, խաւարը՝ խեղդող, զաշտերը՝ մռայլ, լեռները՝ համբ:

Բայց ահա թփերն ու ծաղիկներն իրար են գալիս, նրանց թերթիկներ մեղմ փաթաթւում են, փարում են իրար և զալարում են քամու մեղմ շնչով, իրար մօտ գալիս ինչպէս անտէրունչ, մոռացւած որբեր, որոնք դողում են խաւարից, ցրտից, — և նրանց քնքոյշ սօսափունի մէջ հազիւ լսում եմ ուշիկ շշուճներ, որպէս

մըմունջը վշտացած ոգու, որպէս հեծեծիւնը լացող գիշերւայ...

— „Լուր կաց, ուխտաւոր, լուռ... Մի խռովիր տխուր հանգիստը ցաք ու ցրիւ ընկած մեր ոսկորների... Չիրիմ ես փնտռում... Գնա՛ դէպի այնտեղ, ուր կեանքից իսպառ յղփացած մարդը, աշխարհի ցաւին անզգայ, անփոյթ, սիրում է մեռնել ճոխ ապարանքում— այնտեղ՝ ուր մարդը դողում է մահից և բռնութեան առաջ՝ ինչպէս վատ սողուն՝ եւ գալարում է, եւ հողը լիզում, ուր մի կաթ արիւնից սարսափի մատնւած, նա ծով արցունքով ցօղում է ձեռքը բիրտ բռնաւորի, որ թողնի նրան անարգ կեանքից յետ՝ մի անարգ մահով իր շունչը փչել..."

„Չիրիմ ես փնտռում... Ո՛հ, զգոյշ շարժիր. նայիր ոտքիդ տակ. տեսողու քայլում ես շիրիմների մէջ... Ժայռերի ներքև, վտակի ափին, սև լեռան կրծքին, այս թփերի մէջ, այն խոտերի տակ՝ անտէր փուած են մեր ոսկորները... Քամին է շոյում մեզ իր մեղմ շնչով, ծաղիկն է լալիս մեզ ուշ գիշերին, խաւարն է ծածկում մեզ գազաններից... Թող. թող, մեզ հանգիստ ու անցիր գնա՛..."

„Երբ արշալոյսի առաջին շողեր կը ոսկեզօծեն լեռան կատարը, դու ուշով նայիր հսկայ ժայ-

ւերին. տես, սե են կտրել ինչպէս մութ գի-
 շեր և պատառ-պատառ բաժնել իրարից: Այն
 սե օրերում նրանք զայրոյթի ցաւից ճողքե-
 ցին. այն մեր անէծքից նրանք սեացան մեր սր-
 տերի պէս... Ինչե՛ր են տեսել, այն ի՛նչ կու-
 էր... Օրերով սոված՝ մենք խոտ ծամեցինք,
 չար կուի համար փամփուշտ էլ չկար (ա՛խ
 հայ ժողովուրդ, ա՛խ, անմիտ լալկան). թշնա-
 մու գնդակով երկու ասկ խոցւած, հրացան-
 ներիս տաք-տաք փողերով դեռ կուում էինք,
 ճանապարհ հարթում նրանց կարգերում և եր-
 կու քայլում ընկնում շարքերով... Իսկ ով զէնք
 չունէր, ողջ թէ վիրաւոր, այն օրհասական,
 արիւնոտ մարտում գէթ վերջին անգամ պինդ
 փաթեթուում էր թշնամու վզով, կրծում
 կտկորը սուր ատամներով, յոգնած, ուժա-
 սպառ գետին թաւալում, կրկին վեր կե-
 նում, կրկին գալարում վիրաւոր օձի պէս
 թշնամու մարմնով և վերջին անգամ փոււում
 էր գետին՝ կուրծքը պատառւած, անյոյս, ան-
 կենդան... Այսպէս ընկանք մենք, և մեր կոչե-
 րին ոչ ոք ձայն տուեց, մեր աղաղակներին ոչ
 մի արձագանք, բացի լեռներից և սե ժայռե-
 րից... Թո՛ղ, թո՛ղ մեզ զնա և մի խռովիր դու
 մեր հանգիստը...

„Ուի տի՛ ևս եկել... Ինչո՞ւ չհասար այն անեղ
 ժամին, երբ մենք ուժասպառ, յոգնած, վիրա-
 ւոր ընկնում էինք զէնքով կամ անզէն, տա-
 նեակ գնդակից սրտերս խոցւած... Ո՛ւր էիր,
 երբ զէ՛նք, զէ՛նք աղերսեցինք, երբ որ անփամ-
 փուշտ մեր հրացաններ ժայռերի վրայ մէկ-
 մէկ փշրեցինք, երբ իբր վահան՝ կրծքերս ունէ-
 ինք և հատու դաշոյն՝ մեր բազուկները, երբ
 լալիս էինք անպօր զայրոյթից՝ մատնւած մի
 անարգ, սե մոռացութեան, երբ որ մեր շուրջը
 մարդիկ անվրդով գլուխ էին պարզում սրերի
 առաջ, ինչպէս ոչխարի հնազանդ հօտեր... Այն
 օրհասական, այն անեղ ժամին, աստ, ո՛ւր էիր,
 ինչո՞ւ լուռ կացար... Թո՛ղ, մի խռովիր դու մեր
 հանգիստը, անցիր ու գնա...

„ Ի՛նչ ես փնտռում խուլ ամայութեան մէջ
 մուայ դաշտերի, ուր մահն է իշխում և լուռ
 գերեզման, ուր ցաւն ու վշտեր մարած են ընդ-
 միշտ մեր կեանքերի՝ հեռ, ուր քամին անգամ
 զգոյշ է սուլում, ուր թռչուններն էլ ահով են
 անցնում... Թո՛ղ մեզ, հեռացիր: Գնա՛ ուխտ
 այնտեղ, ուր վէրքն է մխում խորունկ ցաւերով,
 արցունքն է հեղեղ, հառաչանքն՝ անվերջ: Թո-
 դութիւն ևս ուզում... Երբ որ կը սրբես լացող
 սչքերը, երբ որ կը սփոփես այրւած սրտերը,

երբ մենակ կանես այն, ինչ մեզ հետ չարիր, —
այն ժամանակ արիւն անսա. . [Թողու՛ թիւն տւէք, ...
Ա՛հ այն ժամանակ հազար տեղերից, հազար
ձայներով, հազար ձորեր և հազար քարեր քեզ
մէկէն կասեն - . հազար երանի քեզ, : Եւ թէն
անշիրիմ ու այնիշատակ, մենք էլի կը քնենք
հանգիստ յաւիտեան, ...

Եւ լուռ անցնում եմ արիւնոտ դաշտով, քայ-
լում եմ անվերջ յառաջ ու յառաջ—այնտեղ,
ուր վէրքն է մխում ցաւերով, ուր արցունքն է
հեղեղ, հառաչանքն անվերջ և արիւնը ծով...

Նահատակ ընկերներ, արդեօք դեռ երկնք
պիտի սպասէք իմ վերադարձին...



5566

2013

